



Բամնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքաման երկիրներ 50 լիւն, արտասահման (6) լիւն
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 10

է. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1931

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱՆԲԵՐԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏԱՐԻՆ

«Բանբեր»ի ընտանիքին յայտնի է որ անցեալ տարի խոստացանք մէկ տարի յետոյ, այսինքն 1932ին թերթն աւելի ընդարձակել: Խմբագրական մարմինը այս տարւոյն անցեալ ամիսներուն մէջ հարկ եղած կարգադրութիւններուն համար կարգ մը խորհրդածութիւններէ յետոյ՝ որոշած է «Բանբեր»ը կրկնապատկել, իր ընթերցողներուն աւելի լայնօրէն ծառայելու համար: — Արդ, յառաջիկայ տարւոյն Յունվարէն սկսեալ թերթն պիտի երեւի դարձեալ երկու լեզուով Հայերէն եւ թուրքերէն: Հայերէնը 16 էջ եւ թուրքերէնը 8 էջ ծաւալով: Երկու լեզուներու պարունակութիւնը բոլորովին անջատ են, այսինքն իրարու թարգմանութիւն չեն: Այսպէս ըրած ենք մինչեւ հիմայ եւ այսպէս ալ պիտի շարունակենք, այնպէս որ երկու լեզուներն ալ պիտոյր երկուքէն ալ կարենայ օգտուիլ, ինչպէս կ'ընեն շատեր:

Հոս դարձեալ տեղն է կրկնելու թէ «Բանբեր» բրնաւ յաւակնութիւնը չունի ոեւէ մէկ թերթի հետ մրցելու եւ կամ ոեւէ յարանուանական շարժառիթներով եւ բանավէճերով զբաղուելու: Մեր բարձրագոյն նպատակն է կորսուածին ցոյց տալ կենաց ճամբան՝ Յիսուս Քրիստոսը: Ապա մեղաւորները համոզել թէ մեղքին եւ դատապարտութեան տակ են եւ ձրի կ'արդարանան Քրիստոսի շնորհքով: Հոգեւորները հոգեւոր կեանքի մէջ աւելի քաջալերել եւ յաղթա-

կան կեանքի շաւիղներ եւ կարելիութիւններ ցոյց տալ եւ զանոնք հաստատել անոնց մէջ:

Յառաջիկայ տարւոյն համար Հայերէն մասը պիտի ունենայ խմբագրականներէ զատ դարձեալ հոգեւոր կեանքը խորունկցնող յօդուածներ, ինչպէս ասկէ առաջ միշտ ունեցած ենք:

Ս.գրական ուսումնասիրութիւններու մասնաւոր ոյժ պիտի տանք: Այս սիւնակին տակ զննելով Առաքեալներուն կեանքը, անոնց գործունէութիւնը ու մահը եւ անոնց Աւետարանին ուսուցման կորիզը: Նոյնպէս պիտի ջանանք առաջին թիւէն սկսեալ Աստուածաշունչի գրքերէն իւրաքանչիւրին վրայ կարելի եղածին չափ ամփոփ եւ լեցուն ներածական ուսումնասիրութիւն մը ընել:

Ուրիշ յօդուածներէ եւ երբեմն իրական կեանքի զէպքերէ զատ մասնաւոր տեղ մը պիտի տանք Տէրութեան օրհնութեան ծառաներու կենսագրականներուն: Յունվարի թիւով պիտի սկսինք «Օպերլին»ի կեանքը եւ անկէ յետոյ պիտի ջանանք «Յիսուսը»ի, Մօրավեան մեծ Սղբայրութեան հիմնադրին կեանքը ներկայացնելու:

Մանկանց սիւնակը աւելի պիտի ընդարձակուի եւ աւելի հետաքրքրական պիտի ըլլայ, ինչպէս նաեւ Զանազան լուրերը, ուր պիտի տեսնուին այլեւայլ երկիրներու մէջ տեղի ունեցող հոգեւոր շարժումներ:

տեղեկութիւններ:

Հիմակուընէ մեր ծրագիրը ներկայացուցինք «Բանբեր»ի ընտանիքին, որ անոնք հիմակուընէ մտածեն իրենց եւ իրենց զրկելիք տեղերուն համար: Նաեւ որոշեն թէ մէկ լեզուէն, եւ կամ երկու լեզուէն ընդունիլ կ'ուզեն: Երկու լեզուէն ուղղորդուին ընակահարար զեղջեալ զին մը պիտի ըլլայ: Այս կէտին մասին յառաջիկայ թիւին «Չանագան լուրեր»ու բաժնին մէջ պիտի խօսինք եթէ Տէրը կամի:

Արդ պիտի խնդրենք որ «Բանբեր»ի ընտանիքին անդամները այս մասին մտածելէ յետոյ մեզի ժամանակին տեղեկացնեն, որպէսզի յառաջիկայ տարուան մէջ իրենց թերթերը ճիշդ ատենին ընդունին:

Փրանսայի մէջ գտնուողներ թող հաճին իրենց բաժանորդագրութիւնը նորոգել հետեւեալ կերպով: Բարիզի շրջանը գտնուողներ թող հաճին դիմել Պատ. Զ. Պոլտաքեանի, Լիոնի շրջանը գտնուողներ Պատ. Պարսոմեանի, Սէնթ Էթիէնի շրջանը գտնուողներ, Պրն. Իսրայէլ Աբրահամեանի, Վալանսի շրջանը գտնուողներ Պրն. Վահան Սահակեանի, Արտէշի շրջանը գտնուողներ, Պատ. Ա. Փափագեանի, իսկ առանձին տեղեր գտնուողներ ուղղակի Մարսէյի հասցէին:

Արտասահմանի բաժանորդներ թող հաճին իրենց ամենէն դիւրին կերպով մեզի յայտնել իրենց փափաքը, բաց նամակ մ'իսկ բաւ է:

Բոլորովին փստաւ ըլլալով թէ Տէրը այս անցեալ եօթը տարիներուն մէջ մեզի օրհնութիւն մը ըրած է «Բանբեր»ը եւ անոր միջոցաւ մեզի մասնաւորապէս խօսած է, կը մտախնայ որ Անիկա ասկէ վերջն ալ սոյն պատիկ միջոցով մեզի հետ խօսի:

Այս առթիւ մեր մասնաւոր շնորհակալութիւնները կը յայնտենք անոնց որ բաժանորդ գտնելով եւ կամ գործակալ ըլլալով մեզի գործակցեցան: Տէրը օրհնէ զիրենք այդ ջանքերուն համար եւ գանոնք ալ արդիւնաւոր ընէ:

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Սուրբերը յափշտակուելէ և դատուելէ յետոյ անոնք իբրեւ «եկեղեցի» պիտի կազմեն «Քրիստոսի հարսը»:

Քրիստոս «իւ որդւոյն համար հարսանիք ընող թագաւորին» առակով (Մատթ. ԻԲ. 4-4) կը մատնանշէ «եկեղեցի»ին հարսանիքը, որուն իրագործումը նկարագրուած կը գտնենք Յայտ. ԺԺ. 7-9 համարներուն մէջ:

«Խնդանք և ուրախանանք ու փառք տանք Անոր, քանզի Գառնուկին Հարսանիքը հասաւ, ու Անոր կինը ինքզինք պատրաստեց: Եւ իրեն տրուեցաւ որ մաքուր ու լուսափայլ բեհեզ հագնի (քանզի այն բեհեզը սուրբերուն արդարութիւնն է): Եւ ինծի ըսաւ, զրէ,

երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեաց ընթերքին կանչուած են »:

Զըսեր «հարսին հարսանեաց», այլ կ'ըսէ «Գառնուկին հարսանեաց», որովհետեւ այս մեծ տօնախմբութեամբ ոչ թէ հարսին յոյսերն են այնքան որ պիտի պսակադրուին՝ այլ Աստուծոյ Իր Որդւոյն համար պատրաստած ծրագիրը՝ աշխարհի հիմը դրուելէն առաջ (Եփես. Ա. 4): Գառնուկին հարսանիքը կատարելագործումն է Քրիստոսի ուրախութեան՝ իբրեւ վարդ: Անոր հարսանիքը կարելի պիտի չըլլար՝ եթէ Անիկա մարմին առած չըլլար: Քանզի հարսը մարդկային ծագում ունենալով՝ անոր միացումը Գառնուկին հետ այլատեսակ վիճակներու միացումը պիտի ըլլար: Անոր համար էր որ Յիսուս Իր մարդկային մարմնով երկինք համբարձաւ ու այսօր երկինքի մէջ կը գտնուի Քրիստոս Յիսուս Մարդը: (Ա. Տիմ. Բ, 5) Թէպէտեւ Քրիստոսի հարսը ընտրուած էր աշխարհի հիմը դրուելէն առաջ, սակայն հարսանեկան հանդէսը չէր կրնար տեղի ունենալ մինչև որ Քրիստոս չմարդկայնանար և իբրեւ Քրիստոս Յիսուս Մարդը երկինք չհամբարձար: Շատ խօսեցեալներ երկար ժամանակ սպասած են, սակայն Յիսուս անհնէն երկարը սպասած է, գրեթէ 1900 տարիներ, բայց եւ այնպէս այլեւս երկար ատեն պիտի չանցնի, երբ երկինքի մէջ պիտի արձագանգուի հետեւեալ աղաղակը.

«Խնդանք և ուրախանանք ու փառք տանք Անոր, քանզի Գառնուկին հարսանիքը հասաւ »:

Աշխարհիս վրայ միջազգային հետաքրքրութիւն պատճառող շատ արքայական հարսանիքներ տեղի ունեցած են, ուր հարսանեկան հիւրերը ակնատես եղած են շլացուցիչ փառքի և ուրախացած այն կապին վրայ որ կապած է ազգ ազգի հետ: Սակայն Գառնուկին և Իր հարսին հարսանեկան հանդէսը պիտի գերազանցէ այն ամէնը, քանզի այդ առթիւ երկինք և երկիր պիտի կապուին իրարու անքակտելի կապով մը, վասնզի ինչ որ Հայրն Աստուած կը միացնէ, ոչ ոք պիտի կարենայ զատել. այս միացումը յաւիտեական է և յաւիտեան պիտի չլուծուի:

Հարսը պիտի հագնի մաքուր և լուսափայլ բեհեզ, քանզի այս բեհեզը սուրբերուն արդարութիւնն է: (Յայտ. ԺԺ. 7, 8) Արդարութիւն թարգմանուած բառը քնազրին մէջ յոգնակի գործածուած է (արդարութիւններ), այսինքն արդար գործերը սուրբերուն որոնք Քրիստոսի Ատենին առջև դատուելով ընտիր գտնուած ու յաւերժացած են:

Ղովտ Սողոմէն դուրս ելլելէն անմիջապէս յետոյ դատապարտութիւն իջաւ քաղաքին վրայ: Երբ նոյ տապանը մտաւ դատապարտութիւն հասաւ ըմբոստներուն: Եկեղեցին երբոր բարձրանայ, դատապարտութիւն պիտի ըլլայ երկրի վրայ: ՄՈՒՏԻ

«ԵՓՐԵՄ ՉԴԱՐՁՈՒԱԾ ՇՕԹԻ ՊԷՍ Է»

(ՈՎՍ. Է. 8)

Չգարձուած շօթի մը մէկ կողմը հոսմ կը մնայ: Եւ այսպէս էր Եփրեմ շատ մը տեսակէտներէ: Աստուածային շնորհքը անոր չէր դպած: Թէեւ կիսատ հընազանդութիւն մը կար՝ բայց տակաւին շատ շատ ապստամբութիւն կը մնար: Ով իմ հոգիս, վրադ հարկ կը դնեմ որ քննես, տեսնես թէ քու վիճակդ ալ այնպէս չէ: Աստուծոյ բաներուն մէջ անթերի՞ ես: Շնորհքը քու էութեանդ մինչեւ կեդրոնը դացած է, այնպէս որ բոլոր ուժերուդ, գործքերուդ, խօսքերուդ եւ խորհուրդներուդ մէջ իր Աստուածային գործողութիւնները դգացնէ: Քու նպատակդ եւ ազօթքդ պէտք է ըլլան սրբանալ միտքով, հոգով եւ մարմնով: Ու թէեւ քու մէջդ սրբութիւնը որեւէ տեսակէտէ՝ աստիճանային կատարելութեան չի կրնար հասնիլ՝ բայց եւ այնպէս պէտք է որ իր գործողութիւնը բովանդակ էութիւնդ պարփակէ: Պէտք է որ մէկ կողմի մէջ սրբութեան երեւոյթ եւ ուրիշ կողմի մը մէջ տիրող մեղք գտնուի, եթէ ոչ դուն ալ չգարձուած շօթ մը պիտի ըլլաս:

Չգարձուած շօթի մը կրակին ամենէն մօտ եղած կողմը շուտով կ'այրի: Ու թէեւ ոչ ոք կրնայ չափազանց կրօնասէր ըլլալ՝ բայց եւ այնպէս կան ոմանք որոնք մէկ երեսէ սեփ սեւ այրած կ'երեւին մոլեռանդ եւ կոյր դարձած ըլլալով՝ ճշմարտութեան այն մասի պաշտպանութեան համար՝ զոր իրենք ընդունած են: Եւ կամ անոնք այրած, անխացած են սնափառ փառիսեցիական ցուցամոլութեամբ մը՝ իրենց քմահաճոյքին յարմարող կրօնական սկզբունքներու գործադրութեան մէջ: Յաճախ այնպէս է որ բարձրագոյն սրբութեան մը ձեւեր առնուած դրսերեւոյթին՝ կ'ընկերանայ կենսական աստուածապաշտութեան կատարեալ բացակայութիւնը: Մարդոց առջեւ սուրբը առանձնութեան մէջ դեւ է: Յորեկը ճերմակ ալիւր կը ծախէ իսկ գիշերը սեւ մուր: Մէկ կողմին վրայ վառած շօթը միւս կողմին վրայ խմոր կը մնայ:

Եթէ ես այսպէս եմ, ո՞հ Տէր, զիս դարձուր: Դարձուր իմ չսրբուած բնութիւնս դէպի Քու սիրոյդ կրակը. եւ թող նա զգայ սուրբ ջերմութիւնդ, եւ թող վառած կողմս քիչ մը պաղի, որպէսզի սորվիմ թէ ինքզինքէս տկար եմ եւ Քու երկնային բոցէդ վերջուած ատենս ինքնիրմէս տաքութիւն չունիմ: Թող երկմիտ անձնաւորութիւն մը չըլլամ, հապա մէկը որ ամբողջովին շնորհքի գօրաւոր եւ տիրող ազդեցութեանը տակ է: Որովհետեւ ես լաւ գիտեմ, որ եթէ իբր չգարձուած շօթ մը թողուիմ՝ եւ եթէ երկու կողմերս ալ Քու շնորհքը չընդունին՝ օր մը ինքզինքս յաւիտենական բոցերու մէջ պիտի գտնեմ:

2. Հ. ՍՓԸՐՃԸՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ԽՄԲԵՐԳ

Ե՞րբ պիտ անցնինք ով ցորդանան
Ջուրերէդ ահաւոր.
Ե՞րբ պիտ՝ մտնենք ով ցուրբ քանան
Դուներէդ փառաւոր:
Այդ սուրբ ժառանգութեան մէջ
Աստուծոյ թիւերուն տակ,
Պիտի երգենք սիրով մ'անշէջ
Փրկչին փառքն անպարփակ:

Կրկ.— Յի, ինչ խաղաղութիւն, ինչ կատարեալ
հրճուանք,
Այսքան ցաւերէ վերջ՝ Տէր, այս ի՞նչ մեծ
խախտմանք,

Հրեշտակաց հետ միասին
Կ'երգէ սուրբ եկեղեցին
Ալէլուիա, ալէլուիա...
Փառք քեզ, ով եհովա:

Որքան անուշ եւ զգլխիչ
Պիտի ըլլայ այդ պահն՝
Երբ մեր խմբերգովն գրաւիչ
Թնդայ երկնից սրահն:
Այդ ինչ ներդաշնակութիւն,
Շեշտի ինչ գեղեցկութիւն,
Երբ փրկեալներն միաշերան
Երգեն երգն աննրման...

Յի, ինչ խաղաղութիւն...

Հոն յարուցեալ, եթերասեմ
Փրկեալներն լոյս հագած,
Անիատնում փառքի մէջ վսեմ
Պիտի տեսնեն զԱստուած...
Գափուն առջեւ լուսափառ,
Մեր նոր երգը սիրալառ
Պիտի գոռայ անվերջ դարեր,
Փառք, փառք, փառք քեզ ով Տէր:

Յի, ինչ խաղաղութիւն...

Ու եթէ մէկ ապաշխարող
Մեղաւորի համար՝
Հրեշտակաց խումբին առինքնող
Կ'օրհնէ Տէրն անդադար,
Աւ որքան մեծ պիտ ըլլայ
Այդ օրհնեալ հողին վրայ
Մեր փառաւոր ազատութեան
Խմբերքը յաղթական...

Յի, ինչ խաղաղութիւն...

(Ազատ Թարգմանութիւն)

ՕՐՀՆԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

ԿԸ ՄԽԻԹԱՐԷ

Բ. Կրթ. Ա. 4

Ի՞նչ նշանակալից խօսք: Չափն յիշելուն մէջ իսկ երաժշտութիւն կայ: Եւ մեր մէջ չկայ մէկը որ չկարենայ գնահատել անոր իմաստն ու արժէքը: Եսայիայ մարգարէութեանց մէջ Տրբը ուրիշներուն կը կանչէ որ մխիթարեն իր ժողովուրդը եւ քաղցրութեամբ խօսին իր ընտրեալներուն: Բայց հոս Աննկարագրուած է իբր սուրբերուն միակ Մխիթարիչը: Կարծես թէ նա կը մերժէ սպասել մինչեւ ամէն բաներուն կատարուիլը, մեր բոլորիս աչքերէն արցունքները սրբել սկսելու համար, եւ թէ արդէն պատրաստ է մխիթարելու զմեզ ինչպէս խանդակաթ մայր մը կ'սփոփէ իր անդրանիկը:

Աստուծոյ մէջ հայրականին հետ մայրական բնութիւնն ալ կայ: Ամէն սէր իր մէջ էր մարդկային սիրտերու մէջ վառելէ առաջ: Բոլոր աշխարհի մէջ մայրութեան խորանին վրայ բոցավառող կրակները, նախապէս Աստուծոյ սրտէն էր որ բռնկեցան, եւ Ան է որ զանոնք վառ կը պահէ: Հետեւաբար սէրը որ այնքան արագօրէն կը լսէ եւ շուտով կը լռեցնէ մանկան մը ճիւղը, արդէն Աստուծոյ մեծ սրտին մէջ է: Նա կ'սպասէ մեր կարօտութեանց յայտնուելուն զմեզ պարտելու համար իր անսահման սիրոյն եւ սփոփիչ գրկին մէջ:

Առաքեալը շատ անգամներ գիտակցած էր ասոր, եւ երբ այս նիւթին շուրջ կը պատմէ իր փորձառութիւնները, կ'զգանք թէ կ'ունենանք մէկու մը որ գիտէ իր խօսածը: Քիչեր իրմէն աւելի տառապեցան, սկսեալ այն բոլորէն որ ան ամէն ինչ թողուց Քրիստոսի սիրոյն համար, մինչեւ այն ժամը ուր նա մեռաւ իբր հաւատքի մարտիրոս մը: Հին բարեկամական կապերու խզումը, իրեն ինկած Ֆիզիքական տառապանքները, ընտանեկան յարկէ բաժնուած, զրկանքներ, շարունակական ճամբորդութիւններ, եկեղեցիներուն հոգը եւ սուտ եղբայրներուն հակառակութիւնը: Ամէն թուղթ ապացոյցներ ունի այն շարունակական անձկութեան եւ տառապանքին որ կը ճնշէ իր ազնիւ եւ խանդակաթ սիրտը: Եւ գեռ նա կ'ըսէ, «Աստուած կը մխիթարէ զմեզ»: Որ մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, սրպէսզի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք որ ամէն նեղութիւններու մէջ են, այն մխիթարութիւնով որով մենք Աստուծոյ մէջ կը մխիթարուինք» (Բ. Կրթ. Ա. 4)

Շատ կերպեր կան որոնցմով «Ամէն մխիթարութեանց Աստուածը» կ'սփոփէ զմեզ: Երբեմն Ան քաջալերանքի ցոլք մը կը զրկէ մեր մթազնած կեանքին մէջ, քարտի մը վրայ տպուած կամ բարեկամի մը կողմէ զրկուած Սբ. Դրական համարով մը: Երբ

բեմն Սբ. Դրոց համար մը, քաղցրիկ խմբերգի մը նման կը հնչէ մեր յիշողութեանը մէջ:

Չանգակի մը ղողանջը որ հեռուանց կը լսուի լայն հովիտին վրայէն: Երբեմն ընծայ մը—որ կը ցուցունէ թէ մէկը գուրգուրանօք կը խորհի մեր վրայ—մեր ձեռքը կը հասնի եւ զոր կը գնահատենք ոչ իր իսկական արժէքին համար, այլ մանաւանդ այն սիրոյն համար որ թելադրեց զայս: Երբեմն մեր չակնկալած բարեկամը կուգայ մեր տունը, պայծառ դէմքով, ձեռքի տաքուկ սեղմումով մը եւ մենք Աստուծոյ մէջ կը մխիթարուինք Տիտոսի մը գալովը (Բ. Կրթ. Է. 5-6,) Ոչ մէկ օր շատ մութ է, ոչ մէկ բաժին յոյժ տրամալի, զի Աստուծոյ կամքն է անոր մէջ մխիթարանքի փշրանք մը դնել:

Փնտռենք Աստուծոյ սփոփանաց շառաւիղները: Բնաւ վիշտ մը չկայ առանց անոր ընկերացող մխիթարանքի: Միայն թէ յաճախ այնքան խոր կ'ազդուինք եւ կը վշտանանք որ կը կորսնցնենք սփոփանքը: Այնպէ՛ս գետնամած կը կրինք որ չենք տեսներ մեր քովը կանգնած հրեշտակային կերպարանքը: Յաւն այնպէս կը տիրապետէ մեր վրայ որ ալ աչք չենք ունենար ուրիշ բանի, այսպէս լոյսն աննշմար կ'աղօտանայ ու կ'անցնի դաշտանկարէն ու քաղցրաձայն երգիչը աննկատ կը հեռանայ մեր տունէն, զի իրեն զլացանք գնահատանքի խօսք մը կամ երախտագէտ ակնարկ մը:

Երբեմն գաղտնիք մը կը մնայ թէ ինչո՞ւ պարտինք նեղութիւն կրել: Ինչո՞ւ մեր մէջ վշտի բոլոր լարերն ալ կը թրթռան: Ինչո՞ւ մեր բնութեան ամէն կողմերէն ալ կը տառապինք: Ինչո՞ւ ձեռք կը դրուի մեր ստացուածքին վրայ, որ կը հալի մեր նայուածքին առջեւ, եւ մեր տանը վրայ որ կը մըթընայ մահով եւ անձին վրայ, մարմինին տառապելովն ու սրտին խոցոտուելովն ու պատառուելովը: Ոմանք կեանքէն կ'անցնին առանց ասոնց, բայց անոնք չեն ազնուագոյն նկարագիրները: Երաժշտութեան կամ բանաստեղծութեան ոչ մէկ վարպետ շարադրիչ կրնայ մարդկութեան սիրտը յուզել, առանց նախ տառապած ըլլալու:

Բայց գեռ աւելի խորունկ պատճառ մըն ալ կայ: Մեզմէ ոմանցս թոյլ կը տրուի անցնելու ամէն կերպ նեղութեան, սրպէսզի Աստուած պատեհութիւն ունենայ զմեզ մխիթարելու, սրպէսզի մենք ալ սփոփուու աստուածային արուեստը սորվինք, սրպէսզի, մենք կարող ըլլանք մխիթարելու զանոնք որ այն ամէն նեղութիւններուն մէջ են, այն մխիթարութիւնով որով մենք Աստուծոյ մէջ կը մխիթարուինք:

Այս խորհուրդը զմեզ չպիտի հանգստացնէ երբ յաջորդ անգամ ալ անցնինք տառապանքէն: Գլխաւոր բանը որ վիշտը յաճախ անտանելի կ'ընէ, անոր առերեւոյթ անհպատակ ըլլալն է: Ինչո՞ւ այսպէս կը տառապեցնեն զիս: Ես ի՞նչ ըրած եմ: Լուռ կեցի՛ր,

անհամբեր հոգի, դուռն Աստուծոյ տառապանաց դուրս
բողին մէջ եւ մասնաւոր նպատակի մը համար: Զգու-
շութեամբ դիտէ թէ նա ինչպէ՞ս կը մխիթարէ զքեզ:
Տես թէ ինչպէս կը փաթթէ կոտորած հոգին. ի՞նչ մեղ-
միկ հպումով եւ որպիսի՝ ճշգրիտ դիրքի բերելով կը
թելադրէ. արձանագրէ զանոնք որ չըլլայ թէ մոռնա-
կեաքիդ մէջ ժամանակ պիտի գայ որ պիտի կանչուիս
ամոքելու ուրիշները որ ճիշդ քեզի պէս կը տառապին:
Քիչի դրկուած էր այն մասնաւոր ցաւը, վասնզի այն
զոր սփոփելու կանչուած ես, գրեթէ եզակիս եւ ար-
տակարգ պարագայ մը պիտի ներկայացնէ եւ քու մաս-
նաւոր մխիթարանքը կը պահանջուի: Առանց այն մաս-
նաւոր դաստիարակութեանդ, բոլորովին անօգնական
ու անճարակ պիտի մնայիր առջեւդ դրուած դործին
դժուարութեան պատճառաւ, բայց յետ այսու ուրեք ան-
պատեհութիւն չպիտի ունենաս: Երբ անձկալից սիրտը
քեզի կուգայ եւ կը մերկացնէ իր վիշտը, դառնապէս խոր
հելով որ իր տագնապը եզակիս եւ անհասկնալի է,
պիտի մխիթարուի լսելով որ դուռն ալ անցած ես ձորն
ի վար այն մթնոտներ արահետէն, եւ դուռն պիտի կա-
րողանաս զինքը քայլ առ քայլ դուրս հանել, ցոյց տա-
լով իրեն այն ճամբան որով Աստուած քեզ մխիթարեց:

Ո՛վ քրիստոնեայ գործիչներ, դուք որ կը փափա-
քիք հմտանալ հիւանդ հոգիներու ծառայելու արուես-
տին մէջ, մի՛ զարմանաք թէ որ ձեր դաստիարակու-
թիւնը երկարատեւ եւ թանկարժէք ըլլայ: Եւ քանի
ոռ ուրիշ մը չկայ անոր վրայ գործնականացնելու
համար, պատրաստ եղիր տեսնելու թէ Աստուած քեզի
է որ պիտի սորվեցնէ սփոփելը նախ քեզի տալով ցա-
ւը, եւ ապա մխիթարանքը որ կրնայ մեղմել զայն:
Ո՛չ մէկ լեզու կրնայ պատմել Աստուծոյ գուրգուրանքը:
Միայն թէ աւելի ազատօրէն երթանք Իրեն, բանալով
մեր սիրտերուն տագնապը: Իրեն պատմելն իսկ պիտի
թեթեւցնէ զմեզ:

Բաց աստի պիտի դիտակցինք նաեւ փափկիկ
թեթեւացումներու ու ամօքիչ դարմաններու, որք կը
ծնին աստուածային գուրգուրանքին հանճարէն, որոնք
պիտի կարողացնեն զմեզ տոկալու: Եւ Աստուած բը-
նաւ չյոգնիր մեր արտունջներէն կամ երկարատեւ
տառապանքներէն: Նա մեր մօտ կը մնայ մինչ տա-
րիները կ'անցնին: Ան չյոգնիր եւ չթուլնար:

Ու ամէն ժամու համար, հոգ չէ թէ որքան
մթին ըլլայ, եւ ամէն ճամբայի համար ո՛րքան ալ
խորտուբորտ, իրական պիտի գտնենք զայն թէ.—

«Ան Մեք ՆԷ Մ'իթԻԱՐԷ»



ԸՆՏԱՆԻՔԸ

Որ իր տունը վէժի վրայ շինեց: Մատթ. է. 24

Մեր կեանքին մէջ, կատարեալ իմաստութիւն եւ
խոհեմութիւն պահանջող խնդիր մըն է կեանքի ըն-
կերոջ ընտրութիւնը: Դրացիդ կրնաս փոխել եւ հե-
ռանալ, առեւտրական ընկերդ կրնաս քիչ փասս կը-
րելով ձգել եւ ազատուիլ, սակայն կեանքի ընկերդ
նա անբաժան ընկեր է: Ուստի սխալ ընտրութիւն
մը տեսական ցաւ պիտի պատճառէ քեզի:

Սխալ ընտրութիւնը ոչ միայն այր եւ կնոջ հա-
մար աղէտալի եւ կործանարար է, հապա ապագայ
սերունդին ալ դժբաղդութեան պատճառ: Ամէն սխալ
մասամբ կրնայ դարմանուիլ, սակայն մարդկային
բոլոր միջոցներ այս աղէտալի սխալը դարմանելու
կարող չեն: Այսօր աշխարհ այս սխալին որպէս
դարման ապահարզանը կ'առաջարկէ, աւելի կործա-
նարար միջոց մը իր հետեւանքներով, անբարոյակա-
նութեան քաղաքավար եւ օրինաւոր ձեւ մըն է ա-
պահարզանը: Մատթ. ԺԺ. 9 մեր Տէրոջ սահմանու-
մով ամուսնութեամբ մարդ այլեւս երկուք չէ հապա
մէկ. արդէն Աստուծոյ մտքին մէջ մարդ այր եւ կը-
նոջ միասին տրուած անուն մըն է, ուստի այրը կը-
նոջմովը եւ կինն ալ իր ամուսինովը կատարելու-
թեան հանելով բուն մարդը կը կ'ազմեն: Ծննդ. Ե.
1-2: Մարդ, մարմին, հոգի եւ շունչ (միտք) ամբող-
ջութիւն մըն է: Յարմար ամուսնութիւն մը այս ե-
րեքին կատարեալ ներդաշնակութիւնն է որ երջան-
կութիւն յառաջ կը բերէ. ասոնցմէ մէկին կամ միւ-
սին զոհացում տալ ու միւսները զանց ընել դժուա-
րութեան եւ դժբաղդութեանց կ'առաջնորդէ զմեզ:

Կեանքի ընկեր ընտրելու ատեն ընդհանրապէս
մարմնաւոր յարմարութիւններն են որ նկատի կ'առ-
նուին, արտաքին գեղեցկութիւնն է որ կը փնտռուի.
կիրքն է որ մաքին կը տիրէ եւ կ'առաջնորդէ մի-
ակողմանի ու ախտաւոր ընտրութեան:

Նիւթականը, տեսանելին, երբեմն այնքան կը
կուրցնեն մարդոց աչքերը, եւ այնքան կը գրաւեն
մարդոց խորհուրդը որ բուն մարդը, ներքին մարդը
տեսնել կարելի չըլլար: Ներսի մարդը որուն հետը
պիտի ապրուի, բուն մարդը զոր սէր եւ համակրանք
պիտի վայելէ, միտքը եւ հոգին ծածկուած կը մնան
մարմինին եւ նիւթին ծածկոցին տակ: Իմաստուն է
այն որ այդ վարագոյրը կը վերցնէ եւ բուն ներսի
մարդուն կը նայի տեսնելու թէ արդեօք իրեն տեղ
կա՞յ հոն. պիտի կրնայ խորհուրդին տէրը. եւ սրտին
թազաւորը կամ թազուհին ըլլալ:

Գեղեցիկ եւ զարդարուն շէնք մը որպէս պա-
լատ շատ բան կ'արժէ, սակայն որպէս բանտ կամ
յիմարանոց աւելի դժբաղդ երեւոյթ մը կ'ստեղծէ:
Ուստի ընտրութեան մէջ մարմնաւոր առաւելութիւն-

ները նկատի առնել պէտք է, սակայն հոգեկան առաւելութեանց քով այդ երկրորդական ըլլալու է: Բուն խնդիրը սէրն է, որով կարելի է միասին կեանքի լուծը կրել խաղաղութեամբ եւ համբերութեամբ: Կեանքի լուծը տանիլ, կեանքը ուրախութեամբ վայելել եւ քաղցրութեամբ վարուելով այր եւ կնոջ զիրար յարգելն է, եւ այս բոլորը ոչ թէ մարմնի այլ հոգիի պատուներն են:

Գալով մարմնի առողջապահութեան, այն մասին բան մը մի ծածկեր: Եթէ ունիս տկարութիւններ եւ ժառանգական ցաւեր, մի ծածկեր: Ո՛հ, որքան մայրեր իրենց ձեռքովն իսկ իրենց զաւակներուն գերեզմանը կը փորեն: Ես վկայ եմ ցաւալի դէպքի մը: Աղջիկ մը հետս բժիշկի գնաց. բժիշկը քննութենէ յետոյ հաստատեց թէ անոր թոքերը տկար էին, եւ եթէ անիկա ամուսնանայ, շատ չապրիր: Մայրը կանչելով խնդրեց հասկցուցի. հակառակ խրատիս ամուսնացուց աղջիկը, վեց եօթը ամիսներու դժբաղդ ամուսնական կեանք մը անցնելէ յետոյ խեղճը հիւանդանոցի մը անկիւնը հոգին աւանդեց:

Որքա՛ն անգամ մայրեր կը ծածկեն իրենց աղջկանց տկարութիւնները եւ թոյլ կուտան որ բնութեամբ եւ մարմնով անյարմար ամուսնութիւններ տեղի ունենան: Ասով անոնք դժոխք մը կ'ստեղծեն, որուն մէջ առաջին տառապողը իրենք կ'ըլլան: Մի վախար քոյր, աւելի երջանիկ պիտի ըլլաս առանց ամուսնանալու, քան թէ սխալ եւ անյարմար ամուսնութիւնով:

Նոյնպէս երբեմն երիտասարդներ իրենց մարմնոյ տկարութիւնները եւ ժամանակին իրենց ունեցած ցաւերը ծածկելով կը դժբախտացնեն իրենց կողակիցը, զանոնք կատարուած իրականութեան մը առջեւ դնելով եւ խոստովանելով այն բաները զորոնք առաջուց ըսելու էին: Այս պատճառ կ'ըլլայ որ յաճախ կնոջ վճարահոգութիւնն ալ կը կորսուի իրենց վրայ:

Այսպիսի երիտասարդի մը հանդիպած եմ: Երբ հարցուցի պատճառը թէ արդեօք ինչո՞ւ ամուսնանալէ առաջ չ'այտնեց իր տկարութիւնը. պատասխանը իր արարքին չափ յիմարական էր: Ան ըսաւ, «Եթէ կեանքս պատմէի, աղջիկը պիտի մերժէր զիս»: Երանի՛ թէ այդպէս ըլլար:

Ուստի սիրելիս, անկեղծ եղի՛ր եւ նախ քան ամուսնութիւնդ ամէն բան պատմէ, չմնայ բան մը որ ամուսնութենէդ վերջը իմացուելով քու սիրոյ կեանքը խանգարէ: Խոյ՛ր քու կողակիցդ քու ազգականներուդ, ընտանիքիդ մարմնաւոր եւ նիւթական բոլոր պարագաներուդ մասին ճիշդ եւ որոշ գաղափար ունենայ եւ չմնայ ապագային յայտնուելիք ծածուկ բան մը:

(Շար.)

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԿՐՆԱՅ ԹԱՏՐՈՆ ԵՐԹԱԼ

Երիտասարդուհի մը իր երէցին երթալով ուղեց անոր հետ խօսիլ կարգ մը հաճոյքներու նկատմամբ: Ամիսներէ ի վեր ջանացած էր որոշման մը գալ թէ արդեօք իրեն համար սխալ էր թատրոն երթալ թէ ոչ: Երէցը ըսաւ թէ այդ խնդիրը քանի մը վայրկեանէն կարելի էր կարգադրել: Երիտասարդուհին խիստ շատ զարմացաւ որ այդպիսի հարց մը որ ամիսներէ ի վեր զինք զբաղեցուցած էր եւ որուն գոհացուցիչ պատասխան մը կարող եղած չէր գտնել, հարց մը որու մասին նոյնիսկ քրիստոնեաներու գաղափարները այնքան կը տարբերէին, կարելի ըլլար լուծել մի քանի վայրկեանէն:

Երէցը Կող. Գ. 17 բանալով օրիորդին առջեւ դրաւ որ կարգայ: Անիկա նայեցաւ համարին վրայ որ այսպէս կ'ըսէր, «Եւ ամէն ինչ որ կ'ընէք, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով՝ բոլորը Տէր Յիսուսի անունովը ըրէք Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցանելով անոր ձեռքով»:

«Հիմա հոս մեզի կը յանձնարարուի մեր բոլոր գործերը Քրիստոսի հաւանութեան յանձնել եւ նայիլ որ անոնք մեր շնորհակալութիւնը յայտնեն առ Աստուած, ուրեմն եկուր ծունկի գանք եւ աղօթենք», ըսաւ երէցը:

Յետոյ Ս. Գիրքը գետինը դնելով եւ յիշեալ համարը բացուած թողելով երէցը խնդրեց օրիորդէն որ իրեն հետ աղօթէր իր իսկ գործածած բառերը կրկնելով:

Ու երէցը սկսաւ աղօթել՝ «Ով Տէր, Դուն մեզի կը պատուիրես որ ամէն բան Քու հաւանութեանդ յանձնենք եւ ամէն ինչ Քու փառքիդ համար ընենք, Քեզի գոհութիւն մատուցանելով: Հիմա, ով Հայր, այս երիտասարդուհին կը փափաքի իր հաճոյքներուն հարցը Քեզի յանձնել: Անիկա իր շնորհակալութիւնը կը յայտնէ թատրոնին գոյութեանը համար, հաւատալով թէ ինքը կրնայ փառաւորել զՔեզ թատրոնին մէջ եւ թէ թատրոնը քրիստոնեայի մը համար յարմար տեղ մըն է իր ժամանակը անցնելու եւ ընդունելով թէ թատրոն յաճախելը պիտի զօրացնէ իր քրիստոնէական ազգեցութիւնը ուրիշներու վրայ»:

Ճիշդ այդ վայրկեանին երէցը իր ուսին վրայ գդաց ձեռքի մը դրուիլը եւ լսեց երիտասարդուհիին ձայնը որ կ'ըսէր՝ «Խնդրեմ, պատուելի, մի շարունակէք այլեւս աղօթել, քանզի ես այդ կերպ չեմ կրնար արտայայտուիլ թատրոնի մասին: Ինծի համար այդ խնդիրը լուծուած է: Ես չեմ կրնար Յիսուսի անունով թատրոն երթալ, ոչ ալ անոր համար Քրիստոսի շնորհակալութիւն յայտնել, ուստի կը տեսնեմ թէ ինծի համար սխալ է թատրոն յաճախել»:

DR. W. E.



ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԴՐԱՄԻՆ ԱՐԺԵՔԸ

Մարկոս եւ Շնորհիկ օր մը իրենց ազգականներէն մէկէն զրամ ստացան իրենց փափաքածը գնելու, սակայն անոնք տակաւին զրամին արժէքը չէին գիտեր:

«Գիտե՞ս, Շնորհիկ», ըսաւ Մարկոս իր քրոջը, «ես իմ զրամովս ձի մը եւ անոր պէտք եղած բոլոր կազմածը պիտի գնեմ»:

«Ես ալ ոսկիէ ժամացոյց մը եւ շղթայ մը կը գնեմ», ըսաւ Շնորհիկ:

«Եթէ չվախնաս, քեզ իմ ձիուս վրայ կը նըստեցնեմ երբեմն», ըսաւ եղբայրը:

«Անշուշտ չեմ վախնար» պատասխանեց քոյրիկը, ու յարեց, «Եւ քանի որ դուն զիս ձիուդ վրայ պիտի նստեցնես, ես ալ քեզի իմ ժամացոյցս կուտամ որ երբեմն գրպանդ դնես, բայց զգոյշ ըլլալու ես որ զայն չկոտրես»:

«Անշուշտ կ'զգուշանամ», պատասխանեց եղբայրը:

Եղբայր եւ քոյր միասին իրենց ծնողաց գացին որպէսզի իրենց որոշուսները անոնց իմացընեն: Մեծ եղաւ սակայն անոնց յուսախարութիւնը, երբ լսեցին թէ իրենց ունեցածին հարիւր անգամն ունենալու էին իրենց մտադրածը գնել կարենալու համար: Փոքրիկները տրտմած պարտէզ գացին:

Մէկէն նշմարեցին պարտէզին զրան քով կեցած՝ խեղճ կին մը որ անօթի եւ տրտում կ'երեւէր: Քոյր եւ եղբայր իրարու երես նայեցան: Ասոր վրայ Մարկոս պարտէզին դուռը բանալով զրամը խեղճ կնոջը ցուցուց եւ հարցուց թէ այդքան զրամով ո՞րչափ հաց կրնար գնել:

«Ատիկա իմ եւ երկու խեղճ գաւակներուս ամբողջ շաբթուան հացի ծախքը կը հանէ», պատասխանեց կինը, կարօտով տղուն ձեռքին մէջի զրամին նայելով:

«Ուրեմն առէք եւ Ձեզի ու Ձեր անօթի փոքրիկներուն հաց գնեցէք», ըսաւ Մարկոս:

«Ասիկա ալ առէք», ըսաւ Շնորհիկ, իր զրամը անոր երկնցնելով:

Աղքատ կինը յուզումէն անկարող էր բառ մը արտասանելու: Անոր աչքերէն արտասուքի խոշոր կաթիլներ կը հոսէին: Քոյր ու եղբայր ալ սկսան լալ, սակայն անոնց սիրտը ուրախ էր, քանզի գիտէին թէ այդ աղքատ կնոջ արտասուք-

ները ուրախութեան արտասուքներ էին եւ իրենք կարող եղած էին խեղճ ընտանիքի մը երկու շաբթուան հաց ապահովելու:

Անոնք ճանչցած էին այլեւս զրամին արժէքը:

ԱՄԵՆԱՄԵԾ ՍԷՐԸ

Փոքրիկ աղջիկ մը հագիւ եօթը տարեկան, երբ իր մահուան անկողնոյն մէջ կը գտնուէր, խնդրեց իր մեծ քրոջմէն՝ բանալ Աստուածաշունչը եւ կարդալ այն տեղը ուր Յիսուս մանուկները կ'օրհնէ: Երբ քոյրը պատմութիւնը կարդաց եւ գիրքը գոցելով մէկ կողմ զրաւ, աղջիկը արտի կատարեալ անդորրութեամբ եւ ուրախութեամբ գոչեց, «Ի՛նչ երջանկութիւն, քիչ յետոյ ես ալ Յիսուսի քով պիտի երթամ եւ Անիկա զիս իր բազկաց մէջ առնելով պիտի օրհնէ: Ոչ ոք պիտի արգիլէ զիս Անոր երթալէն»:

Քոյրը համբուրեց զայն եւ հարցուց, «Ձիս կը սիրես»:

«Այո», պատասխանեց փոքրիկ աղջիկը, «բայց մի վշտանար ինձմէ որ ըսեմ թէ Յիսուսը քեզմէ աւելի կը սիրեմ»:

Սիրելի մանուկ, քու ամենամեծ սէրդ որով կը պատկանի: Պատասխանը Տէրոջը տուր:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ե. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵԼԵՅԻՆԵՐՈՒ

Տեղի ունեցաւ Լիոնի մէջ 8.11 Սեպտեմբերին: Ներկայ էին Փարիզէն՝ Պատ. Պուտաբեան եւ Պ. Յ. Եափուճեան, Ալֆորվիլէն՝ Վեր. Տէր ՍաՀակեան, Լիոնէն՝ Պատ. Պարպուժեան եւ Պ. Պ. Նիկողոսեան ու Էֆխանեան: Սէնթ Էթիէնէն՝ Պ. Սարայտարեան, Վալանսէն՝ Պատ. ՍաՀակեան, Փօն տ'Օպէնայէն՝ Պատ. Փափազեան ու Պ. Ռ. Բանիդեան, եւ Մարսէյլէն՝ Վեր. Յ. Ղազարոսեան ու Պ. Պ. Պ. Պատաբեան, Յովհ. Աբրահամեան ու Գ. Խայիկեան: A. C. O. միսիոնարութեան ներկայացուցիչներն էին տնօրէն Տօք. Պէրրօն, Օրդ. Վիտման: Իբր հիւր ունէինք Մարսէյլի Վեր. Բաաթօր Բալթընպախ, Vennesի Բրօֆ. Վեր Բաաթօր Անթօնէն, եւ Ժընէվի Ս. գրական ընկերութեան տնօրէն Վեր. Պիւրնա ինչպէս նաեւ մեր սիրելի նորընծաները՝ Պ. Պ. Իսրայէլ Աբրահամեան, Ներսէս Խաչատուրեան եւ Սամուէլ Պապալեան:

Լըջօրէն զգալով միութեան, սիրոյ եւ հոգեւոր խորացման

անհրաժեշտութիւնը՝ համագումարը ժամանակին մեծ մասը յատկացուց կրօնական բանասիրութիւններու, որոնց նիւթերը նախապէս որոշուած էին մեր պէտքին համաձայն եւ պատրաստուած մեծ խնամով: Տօք. Պէրրօն խօսեցաւ երեք անգամ՝ Սուրբ Հոգւոյն գործին, պնդեցինք որ եւ զԱյն ընդունելու պայմաններուն վրայ: Վեր. Անթօնէն երկու բանասիրութիւններով պարզեց մեզի «Արթնութեան պէտքը» եւ «Քրիստոնէական հաւատարկութիւն կեանքը»: Ասոնցմէ զատ՝ մեզի խօսեցաւ նաեւ «Քրիստոնէութեան թշնամիները», «Քրիստոս եւ մենք» ու մեր երիտասարդները նիւթերու վրայ, որոնց բանասիրտներն էին Պ. Պ. Պարսումեան, Պուտաբեան եւ Սահակեան:

Բոլոր նիւթերն ալ մեզ լուրջ խորհրդածութեան ու խորհրդութեան մղեցին: Գրեթէ ամէն մէկ բանասիրութիւնէ ետք կէս ժամ եւ երբեմն ալ ժամ մը ու աւելի միաբանական ազօրքի յատկացուեցաւ, որու միջոցաւ Տէրը աւելի կոտորեց ներկաներու սրտերը եւ զանաւոր մէկմէկու կապեց քրիստոնէական աւելի մեծ սիրով:

Մնացեալ ժամանակը նուիրուեցաւ եկեղեցիներու պէտքերուն խորհրդածութեան: Ուրախ ենք ըսելու որ մեր բոլոր եկեղեցիներն ալ այս տարուան ընթացքին զգալի յառաջդիմութիւն ունեցած են՝ շնորհիւ մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի օգնութեան: Անդամներու թիւը աւելցաւ անհաշուելի քանակով: Անդամներն ալ խորունկացած: Ուրախուի է որ ամէն կողմ եկեղեցիները սկսած են հետաքրքրուել մանուկներով եւ շատ տեղեր անոնց համար հաստատուած են կիրակնօրեայ դպրոցներ ու հայերէն դասընդացքներ: Որպէսզի մանուկներու եւ պատանիներու գործը աւելի լաւ կազմակերպուի, համագումարը որոշեց ուղիքի ունենալ հոգեւոր յարմար երիտասարդ մը, տնոր օգնել մասնագիտական դասընթացք մը ստանալու եւ ապա անոր ղեկավարութեան տակ դնել պատանիներու քրիստոնէական գործը:

Ասկէ զատ համագումարը հետեւեալ որոշումները տուաւ:

1. Ասկէ ետք «Բանբեր»-ի մահճակալին համար եկած գումարները պիտի յատկացուին ֆրանսահայ թոքախտաւորներու:
2. Ո եւ ի հոգեւոր պաշտօնեայ միայն այն ատեն ձեռնադրուելու թուլատրել, երբ ան արդէն իր երեսներորդ տարեկան լրացուցած է եւ գոնէ 5 տարուան յաջող ու օրհնաբեր պաշտօնավարութիւն մը ունի իր ետեւը:
3. Համագումարը գնահատելով Փարիզի քարոզիչ, Պատ. Զաքարիա Պուտաբեանի եւանգելիստ եւ արդիւնաւէտ գործունէութիւնը՝ զայն արտօնեց ասկէ ետք Առաքելական Օրհնութիւնը տալու եւ Հաղորդութեան ու Մկրտութեան Սուրբ Խորհուրդները կատարելու:

Համագումարին չորս երեկոներն ալ աւետարանչական ժողովներու յատկացուեցան: Ասոնց միջոցաւ շատ քրիստոնէաներ աւելի խանդավառուեցան իրենց հաւատքին մէջ եւ մի քանի անձեր ալ ապաշխարեցին ու ինքզինքնին Առողջօր նուիրեցին: Շատ օրհնաբեր էր մանաւանդ վերջին երեկոն, երբ մեր նորընծաները՝ պարոնայք Բարայէլ Աբրահամեան, Ներսէս Խաչատուրեան եւ Սամուէլ Պապալեան, որոնք այս տարի աւարտեցին Լիւանի մէջ գանձող Էմմաուս կոչուած Սուրբ Գրական Դպրոցի դասընթացքը, իրենց վկայութիւնը տուին եւ ապա երէց պաշտօնեաներու կողմէն ձեռքի սեղմումով ընդունուեցան իբր գործակիցներ Միութեան մէջ: Ասոնցմէ Պ. Սամուէլ Պապալեան պիտի գործէ Մարսէյլի շրջանակին մէջ եւ Պ. Բարայէլ Աբրահամեան Սէնթ Էթէնի մէջ իսկ Պ. Ներսէս Խաչատուրեան՝ Հալէպ պիտի մեկնի գործակցելու

բոյր Հեռովիկ Պիւլի:

Վերջին ժողովը Միութեան տնօրէններու սեղմ շրջանակին մէջ հաղորդութեան խորհուրդով անցաւ:

Յառաջիկայ տարի, եթէ Տէրը կամի, Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ Մարսէյլ:

Բոլոր ժողովակոնները համագումարէն բաժնուեցան՝ հոգաւոր զօրացած եւ եղբայրական սիրով միացած:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

— ԾՆԵՂԵԱՆ ԵՒ ՆՈՐ ՏՍՐԻԻ ՔԱՐԴԵՐ —

— Ծ — | — Ծ —

Ինչպէս անցեալ տարի նոյնպէս և այս տարի պիտի պատրաստենք ծննդեան և նոր տարուան յարմար քարտեր: Հետաքրքրուողներ թող հիմակուրնէ զրեւն մեզի, որպէսզի թէ ուշ չմնան և թէ իրենց ապաստանքը հասնելէ առաջ տեսակները չպակսին:

Խմբ. ԲԱՆԲԵՐԻ

0-0-0-0 «ԲԱՆԲԵՐ»-Ի ՕՐԱՑՈՅՑԸ 0-0-0-0

— Զ — | — Զ —

Խմբագրութիւնն նոր ձեռնարկ մը ըրաւ, տպելու օրացոյց մը 1932ի համար:

Այս օրացոյցը ունի ա) 13 գեղարուեստական գունաւոր պատկերներ նշանաւոր նկարիչներու արտադրութեան նկարներէն. իւրաքանչիւր ամսուան էջին ճակատը և օրացոյցին առաջին էջին վրայ:

Բ.— Ամէն օր Ս. Գրական համար մը տպուած է օրուան թիւին տակ:

Գ.— Կիրակնօրեայ դասի տեղերը և անոնց ոսկեղէն համարը:

Դ.— Ծրագիր մը, որու համաձայն տրուած տեղերը կարգալով կրնանք Ս. Դիրքը մէկ տարուան մէջ լմնցնել:

Ե.— Ամէն ամսուան համար պզտիկ պատմութիւն մը, կամ նիւթ մը հոգեւոր կեանքի եւ զիտութեան խորացման ծառայող:

Օրացոյցը եթէ Տէրը կ'ամի, նոյեմբերի սկիզբը պատրաստ պիտի ըլլայ. ապաստանքներ այժմէն ընդունելի են:

Գինը պիտի ըլլայ փոսթի ծախքով միասին 6 ֆրանք:

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH

Տպար. «ԲԱՆԲԵՐ»-ի Imp. Y. Armen, Marseille